ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 886 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-Ի N 183-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2020 թվականի ապրիլի 1-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Մալաթիա-Սեբաստիա Հայորդյաց տան վերանորոգում» ծրագրի մասին» N 183-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 9-րդ կետի 3-րդ ենթակետի 5-րդ կետի 5.1-ին ենթակետում «424,274,064», 6-րդ կետում «131,000,000» և 9-րդ կետում «35,000,000» թվերը համապատասխանաբար փոխարինել «449,274,064», «141,000,000», «50,000,000» թվերով.

2) 10-րդ կետի 3-րդ ենթակետի 5-րդ կետի 5.1-ին ենթակետում «424,274,064», 6-րդ կետում «131,000,000» և 9-րդ կետում «35,000,000» թվերը համապատասխանաբար փոխարինել «449,274,064», «141,000,000», «50,000,000» թվերով.

3) 9-րդ և 10-րդ կետերի 3-րդ այուսակների 5-րդ կետերի 5.5-րդ ենթակետերից հանել «ա. ապրանքների ներմուծում՝ 50.000.000 առանց ԱԱՀ-ի» բառերը.

4) 9-րդ և 10-րդ կետերի 3-րդ այուսակների 6-րդ կետերը «մոնտաժային աշխատանքներ» բառերից հետո լրացնել «և կոնվեկտորների ու ջերմակա-գավորիչների մատակարարում» բառերով:

2. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից (ՀՎՀՀ՝ 00006479) «Կարին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02529731) 2022 թվականի նոյեմբերի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ապրանքների մատակարարում՝ 15,493,300 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2020 թվականի ապրիլի 1-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Մալաթիա-Սեբաստիա Հայորդյաց տան վերանորոգում» ծրագրի մասին» N 183-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Երևան

12.12.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ